ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2023թվականի N **127Ա**

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱԳԼՈՒԽ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՇՈՏ ԲԱԲԿԵՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԵՐԻ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ՉՈՐՍ ՆՈՐ ԴՌՆԵՐԸ, ԵՐԿՈՒ ՓԱԿՎԱԾ ԴՌՆԵՐԸ ԵՎ ՄԵԿ ՓԱԿՎԱԾ ՊԱՏՈՒՀԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 2-րդ գլխի պահանջներով, ***որոշում եմ***՝

1.Եղեգիս համայնքի Քարագլուխ գյուղի 1-ին փողոց, թիվ 2 հասցեում գտնվող, Քարագլուխ գյուղի բնակիչ Աշոտ Բաբկենի Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող 10-044-0079-0002 կադաստրային ծածկագրով, 0.02099հա մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասում առկա խանութի պատերի ձևափոխության արդյունքում նրա կողմից ինքնակամ բացված չորս նոր դռները, երկու փակված դռները, մեկ փակված պատուհանը, որոնք կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց օրինականացումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, որոնք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ճանաչել օրինական և շինության նկատմամբ սեփականատիրոջ սեփականության իրավունքը:

2.Ինքնակամ կառույցը օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2023VDRH5F:

3.Օրինականացման համար սահմանված վճարը կազմում է յուրաքանչյուր դուռ կամ լուսամուտի համար 536 ՀՀ դրամ, ընդհանուր գումարը 3752 /երեք հազար յոթ հարյուր հիսուներկու/ ՀՀ դրամ, որը պետք է մուծվի 900 355 113 060 հաշվեհամարին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարի՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. Մայիսի 18
հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2023թվականի N **128Ա**

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով

որոշում եմ՝

1.Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող հողատեսքերը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն՝

1)Հերմոն գյուղ, գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր 10-029-0124-0001-ից, մակերեսը 0,0141հա,

2)Վարդահովիտ գյուղ, գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսք, կադաստրային ծածկագիր 10-041-0201-0162, մակերեսը 0,00688հա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. Մայիսի 18
հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2023թվականի N **129Ա**

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՐԲԱՏԵՂ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԻԲԵԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0,128 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 26/12/2002թ. «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով

որոշում եմ՝

1.Ճանաչել Եղեգիս համայնքի Հորբատեղ գյուղի բնակիչ բնակիչ Հովհաննես Սարիբեկի Կարապետյանի /ընտանիքի գլխավորը/ և նրա ընտանիքի անդամներ՝ Փառանձեմ Մերուժանի Գրիգորյանի /կինը/, Սյուզաննա Հովհաննեսի Կարապետյանի /աղջիկը/, Արայիկ Հովհաննեսի Կարապետյանի /տղան/, Ռուզաննա Հովհաննեսի Կարապետյանի /աղջիկը/ սեփականության իրավունքը փաստացի ավել օգտագործվող 0,128հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2.Եղեգիս համայնք, Հորբատեղ գյուղ, Կենտրոնական փողոց, 20 հասցեում գտնվող ավել օգտագործվող 0,128հա բնակավայրերի նշանակության հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, և այդ իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2023 թ. Մայիսի 18
հ.Եղեգիս